Արձանագրություն N 2
Սննդային փաթեթների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 16.04.2019թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հովհաննիսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Ազատյան /գնահատող/, Վ. Սոլակյան /գնահատող/
Մ. Զաքարյան /բացող/, Հ. Դավթյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Լ.Հովհաննիսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի ապրիլի 16-ին, ժամը 15:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Լ.Հովհաննիսյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	Գալիմա ՍՊԸ
2	ՄայԼանչ ՍՊԸ
3	էյէլ գրուպ ՍՊԸ
4	Դարմիքս ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Լ.Հովհաննիսյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկները.

1. Սննդային փաթեթներ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
Գալիմա ՍՊԸ	6,400,000	1,882,667	376,533	2,259,200
ՄայԼանչ ՍՊԸ		3,456,000		3,456,000
էյէլ գրուպ ՍՊԸ		4,960,000		4,960,000
Դարմիքս ՍՊԸ		5,360,000		5,360,000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Լ.Հովհաննիսյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Դարմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի.

«Դարմիքս» ՍՊԸ-ի կողմից armeps.am համակարգ մուտքագրված փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, ներկայացված է «Դարմ» ՍՊԸ-ի կողմից: Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Դարմիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Գալիմա ՍՊԸ	Բավարար
ՄայԼանչ ՍՊԸ	Բավարար
էյէլ գրուպ ՍՊԸ	Բավարար
Դարմիքս ՍՊԸ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Լ.Հովհաննիսյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Գալիմա» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «ՄայԼանչ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Լ.Հովհաննիսյան)

6.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի առկայության վերաբերյալ 18.04.2019թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 18.04.2019թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Լ.Հովհաննիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Լ.Հովհաննիսյան

Անդամներ՝ ---------- Հ. Ազատյան

---------- Վ. Սոլակյան

---------- Հ. Դավթյան

---------- Մ. Զաքարյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան